ԱՌԱԿՔ ԱՋԳԱՑԻՆՔ Ի ԳՐՈՑ ՆԱԽՆԵԱՑ

Բևեռով զբևեռ թափել. այսինքն խստիւ զխիստ վանել։

Ի հուր գղել և՝ի ջուր աղալ.
Թակարդաւ ջուր բերել.
Աղիւս լուանալ.
Ջխեցի կարկատել.
Ի ծակ կարաս արկանել.
} *այսինքն զուր ջանալ. ՚ի նանիր աշխատիլ. ընդ վայր կորուսանել զվաստակ։*

Ի քարէ կաթն կթել.
Ի վիմէ ասր ստանալ.
} *այսինքն զանհնարինս խնդրել։*

Զգաղիւ գիրկս արկանել. այսինքն ՚ի դժուարին ինչ ձեռնարկել։

Սարդիոստայն ձգել ծածկոյթ զերեսօք. այսինքն պատրուակել զյայտնի ինչ. պատճառանօք ծածկել զգործս չարեաց։

Սլաքօք գբիւրտն ջնջել.
Ի տէգս նիզակաց գբրտունս երեսաց ջնջել.
} *այսինքն ՚ի մարտս պատերազմաց մաշել զկեանս։*

Որպէս թակարդ զհողմն՝ անցուցանել զխրատ. այսինքն ՚ի դերև հանել զխրատ։

Ցականէ աղբերն պղտորեալ է ջուր նորա. այսինքն որպէս տաճիկ առակն ասէ՝ (պալըք պաչտան քզքար)։

Թողուլ ինչ յայլ բաղուկ և յայլ ակն ուրուք. այսինքն ՚ի զգուշաւոր խնամս ուրուք յանձնել ինչ։

Կապել զոք ՚ի ճկոյթ.
Ի մատանակ արկանել զոք.
} *այսինքն յաղթել ումեք. պարտել կամ՚ի բուռն արկանել զոք. (մատին վրայ խաղցընել)։*

Թակն կոչկոճիչ զգլխոյ կապել. այսինքն ունել զոք իւր գլխահար։

Շարժել զամենայն քար. այսինքն զամենայն հնարս հնարել։

Չհետ լինել խորշակի. այսինքն խնդրել զինքսս անձին։

Ամենայն հաւ յերամս իւր իջանէ. այսինքն նմանն զնմանն սիրէ. նման առ նմանան գնայ։

Խստութեամբ բանն ՚ի հուն չելանէ, քաղցրութեամբ օձն ՚ի ծակէն ելանէ։ Յայտնի են իմաստքն։

Խոզի հարանացելոյ՝ կոյաջուր բաղանիք. այսինքն այնպիսումն այնպիսի ինչ վայելէ։